

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ՀՐՄԱՇՁԲ-2022/19Շ**

ք. Երևան

«06» 09 2022 թ.

«ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը», ի դեմս գլխավոր քարտուղար Ա.Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ապառաժ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Ավետիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Մ-2, (Սյունիք) /Մ-2/ - Աղվանի- Տաթև - /Մ-2/ միջպետական նշանակության ավտոճանապարհի վերին խոտանանը շրջանցող ճանապարհահատվածի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 240 օր, բայց ոչ ուշ, քան ֆինանսական միջոցներ նախատեսվելու տարվա նոյեմբերի 30-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զինել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 **Աշխատանքների առնվազն 100 տոկոսը** կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **3 (երեք) տարին** եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **18 աշխատանքային օրվա ընթացքում** ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **3 022 250 000** (երեք միլիարդ քսաներկու միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, որից **503 708 333** (հինգ հարյուր երեք միլիոն յոթ հարյուր ութ հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների

աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (հնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457

Գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան



/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ապարած» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Նուբարաշեն խճ. 17/1
Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ 15700-04636690100
ՀՎՀՀ 00440378

Տնօրեն՝
Դավիթ Ավետիսյան



Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներգրավվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՉԱՓԱՐԱԺԻՆ 1
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Մ-2, (Սյունիք) /Մ-2/ - Աղվանի- Տաթև - /Մ-2/ միջպետական նշանակության ավտոճանապարհի Վերին հոտանանը շրջանցող ճանապարհահատվածի կառուցման աշխատանքների

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավոր	Ծավալը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեք
1	2	3	4	5	6
I. Կողնակներ					
1	10e-IV կարգի նախապես մշակված բնահողի բարձրում էքս. 1.25 մ3 2. տ. ա/ի, տեղափոխում կողնակների լիցք 1կմ (հարթում, ջրում, խտացում) h=20սմ	մ ³	6186	790	4,886,940
2	10e-IV կարգի նախապես մշակված բնահողի բարձրում էքս. 1.25 մ3 2. տ. ա/ի, տեղափոխում կողնակների լիցք 2կմ (հարթում, ջրում, խտացում) h=20սմ	մ ³	2370	930	2,204,100
3	Կողնակների ամրացում ավազակուճային նյութով հմիջ.=10սմ,	մ ²	32908	1,530	50,349,240
Ընդամենը I					57,440,280
II. Երթևեկելի մաս					
1	Հատիկավոր ենթահիմք, (ավազակույիճ) h=10 սմ	մ ²	123615,3	1,700	210,146,010
2	Խճավազային հիմք (C-5) h=20սմ 100մ ² համար խիճ (40-70) 10% - 2,6մ ³ խիճ (20-40) 35% - 9,1մ ³ խիճ (10-20) 20% - 5,2մ ³ խիճ (5-10) 10% - 2,6մ ³ խիճ (0-5) ավազ 25% - 6,5մ ³ ջուր-1.1մ ³	մ ²	80346,0	2,500	200,865,000
3	Խոշորահատիկ բարձր ծակոտկենությամբ ա/բ h=6սմ	մ ²	77043,0	6,800	523,892,400
4	Խոշորահատիկ ա/բ h=6սմ	մ ²	77043,0	6,700	516,188,100
5	"Ե" տիպի մանրահատիկ խիտ տաք ա/բ h=4սմ	մ ²	77043,0	5,200	400,623,600
Ընդամենը II					1,851,715,110
III. Իջարեղեր և մուրքեր					
1	13-V կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=1-2մ	մ ³	315	3,000	945,000
2	9d-V կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=1-2մ	մ ³	34,5	3,000	103,500
3	Նախապես փխրեցված 9d-V կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ3 2.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 6 կմ միջին հեռ.	մ ³	69	2,000	138,000
4	Նախապես փխրեցված 13-V կարգի բնահողի մշակում բուլդոզերով տեղափոխում 50մ լիցք	մ ³	125	2,700	337,500
5	Նախապես փխրեցված 13-V կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ3 2.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 6 կմ միջին հեռ.	մ ³	505	2,610	1,318,050

6	10з-V կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 6 կմ միջին հեռ.	մ ³	1585	2,610	4,136,850
7	10з-V կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լիցք 2 կմ	մ ³	133	2,610	347,130
8	10з-V կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լիցք 3 կմ	մ ³	246	2,800	688,800
	10з-V կարգի բնահողի մշակում էքս. 2.5 մ ³ շ. տ. բարձում ա/ի տեղափոխում մինչև 1կմ, կուտակում կողնակների լիցքի համար	մ ³	155	1,000	155,000
9	10е-IV կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 6 կմ միջին հեռ.	մ ³	7	2,610	18,270
10	33г-III կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 6 կմ միջին հեռ.	մ ³	21	1,600	33,600
Ընդամենը III					8,221,700
IV. Երթևեկելի մաս					
1	Խճավազային հիմք (C - 5) h=12 սմ խիճ (40-70)- 10% - 1.56մ ³ խիճ (20-40)- 35% - 5.46մ ³ խիճ (10-20)- 20% - 3.12մ ³ խիճ (5-10)- 10% - 1.56մ ³ խիճ (0-5)- ավազ 25% - 3.9մ ³ ջուր-1.1մ ³	մ ²	1001,09	2,500	2,502,725
2	Ե տիպի մանրահատիկ խիտ ա/բ h = 4 սմ	մ ²	918,29	5,200	4,775,108
Մետաղական խողովակներ Ø 530մմ					
1	Ավազակոպճային շերտ h=10սմ (մետ. խող. տակ)	մ ³	3,445	2,200	7,579,000
2	Մետ. խողովակների Ø 530x7մմ տեղադրում	գծմ	53	47,000	2,491,000
3	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	գծմ	49,6	2,300	114,080
4	Միաձույլ բետոնե B-20 գլխամասեր	մ ³	4,8	52,000	249,600
5	Գլխամասերի ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	մ ²	18,0	2,300	41,400
Հարակցում գոյություն ունեցող ճանապարհի հետ					
1	Հատիկավոր ենթահիմք, (ավազակոպիճ) h=10 սմ	մ ²	1543,0	1,700	2,623,100
2	Խճավազային հիմք (C-5) h=20սմ	մ ²	1128,46	2,200	2,482,612
3	Խոշորահատիկ բարձր ծակոտկենությամբ ա/բ h=6սմ	մ ²	1096,28	6,800	7,454,704
4	Խոշորահատիկ ա/բ h=6սմ	մ ²	1096,28	6,700	7,345,076
5	"Ե" տիպի մանրահատիկ խիտ տաք ա/բ h=4սմ	մ ²	1096,28	5,200	5,700,656
Ընդամենը IV					43,359,061
V. Կողնակներ					
1	10з-V կարգի նախապես մշակած բնահողի բարձում էքս. 1.25 մ ³ շ. տ. ա/ի, տեղափոխում կողնակների լիցք 1կմ (հարթում, ջրում, խտացում) h=26սմ	մ ³	155	1,000	155,000
2	Կողնակների ամրացում ավազակոպճային նյութով հմիջ.=10սմ,	մ ²	596	1,530	911,880
Ընդամենը V					1,066,880
VI. Ճանապարհային նշաններ					
1	Նոր ճան. նշանների տեղադրում, այդ թվում՝	հատ	596	4,000	2,384,000
2	- նախագգուշացնող	հատ	508	20,000	10,160,000
	- առավելության	հատ	30	20,000	600,000
	- արգելող	հատ	6	20,000	120,000
	- թելադրող	հատ	5	20,000	100,000
	- տեղեկատվության	հատ	10	20,000	200,000

	- սպասարկման	հատ			
	- լրացուցիչ տեղեկատվության	հատ	27	20,000	540,000
	- անհատական նախագծման (տեղեկատվության)	մ ²	53,69	15,000	805,350
3	Կանգնակ մետ. խող 57x4մմ	գծմ	1016	12,000	12,192,000
4	Միաձույլ բետոնե հիմք B-15	մ ³	41,16	75,000	3,087,000
			Ընդամենը VI		30,188,350
	VII. Նշագծում				
1	Նշագծումը ընդհանուր մակերեսը (թերմոպլաստ h=3մմ, ապակե գնդիկների ավելացմամբ) այդ թվում՝	մ ²	3226,76	9,500	30,654,220
	հոծ գիծ 1.1 (0,1)	մ ²	824,9	3,250	2,680,925
	հոծ գիծ 1.2 (0,1)	մ ²	2194,5	3,250	7,132,125
	ընդհատվող գիծ 1.5 1:3 (0,1)	մ ²	26,25	3,250	85,313
	ընդհատվող գիծ 1.6 3:1 (0,1)	մ ²	127,5	3,250	414,375
	Ընդհատվող գիծը 1.7 1:1 (0,1)	մ ²	11,9	3,250	38,675
2	Նշագծում 1.13	մ ²	0,60	3,250	1,950
	Նշագծում 1.18	մ ²	8,57	3,250	27,853
	Նշագծում 1.16.1	մ ²	20,62	3,250	67,015
	Նշագծում 1.16.2	մ ²	5,96	3,250	19,370
	Նշագծում 1.16.3	մ ²	4,76	3,250	15,470
	Նշագծում 1.20	մ ²	1,20	3,250	3,900
			Ընդամենը VII		41,141,190
	VIII. Արգելափակոցներ				
1	Մետ. արգելափակոցների տեղադրում ծ 4մմ, կանգնակներ շվեյեր N16, քայլը 2մ կոշտ հարվածամարիչով	գծմ	5340	30,000	160,200,000
2	Մետ. արգելափակոցների տեղադրում ծ 4մմ, կանգնակներ շվեյեր N16, քայլը 4մ կոշտ հարվածամարիչով	գծմ	3152	34,000	107,168,000
3	Պոլիմերային ուղղորդ սյուների (C-1) տեղադրում	հատ	120	8,400	1,008,000
			Ընդամենը VIII		268,376,000
	IX. Արհեստական կառուցվածքներ				
	Գաբիոն				
	Կմ 10 + 200 - Կմ 10 + 277				
	Կմ 10 + 282 - Կմ 10 + 585				
1	33բ-III կարգի բնահողի մշակում էքս.1.0մ ³ 2.տ.կողքի կուտակումով, հետադարձ լիցքի համար (փոստրակի փորման ժամանակ)	մ ³	363,33	1,620	588,595
2	Նույնը ձեռքով	մ ³	40,37	1,000	40,370
3	Գաբիոնային շարվածք 1x1x0.5 (քար)	մ ³	380	16,000	6,080,000
4	Հիմնակմախք d=6.5մմ, 1q=0.260կգ, 1հատ=12.3գծմ	կգ	2430,48	380	923,582
5	Ցանցը ամրակով d=3մմ, 1մ ² =1.435կգ, 1հատ=4մ ²	կգ	4362,4	270	1,177,848
6	Գաբիոններին կապող մետաղալար d=3.0մմ, 1հատ=1.2գծմ, 1հատ=0.066կգ	կգ	50,16	200	10,032
7	Մետաղյա ձող d=18մմ, 1գծմ=1.998կգ, 1հատ=1.0մ	կգ	1822,176	400	728,870
8	Ավազակոպճային փող շերտ h=20սմ	մ ³	87,4	10,000	874,000
9	Հետադարձ լիցք բուլդոզերով	մ ³	115,58	800	92,464
10	Հետադարձ լիցք ձեռքով	մ ³	12,84	950	12,198
11	Նախօրոք մշակած 33բ-III կարգի բնահողի բարձում էքս. 1.0մ ³ 2.տ.ա/ի տեղ. լցակույտ 6,0կմ միջին հեռ. վրա	մ ³	275,28	1,950	536,796

Հենապար Կմ 4 + 642 - Կմ 4 + 953					
1	10Յ-V կարգի բնահողի մշակումը էքս. 1.0մ ³ շ.տ. կողքի կուտակումով հետադարձ լիցքի համար (փոստրակի փորման ժամանակ)	մ ³	224,21	1,000	224,210
2	Նույնը ձեռքով	մ ³	24,91	1,000	24,910
3	13 -V կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով հ0.5-1.0մ	մ ³	16,7	6,000	100,200
4	Նախօրոք փխրեցված 13-V կարգի բնահողի բարձում ա/ի 1.0մ ³ շ. տ. էքս., և տեղափոխում լցակույտ 6.0 կմ միջին հեռ. վրա	մ ³	30,06	1,500	45,090
5	Նույնը ձեռքով	մ ³	3,34	1,000	3,340
6	Ավազակրպճային շերտ հ=20սմ	մ ³	5,87	10,000	58,700
7	Հենապատի հիմքի իրականացում միաձույլ բետոնից, B20, F200	մ ³	56,03	149,000	8,348,470
8	Հենապատի իրանի իրականացում միաձույլ բետոնից, B20, F200	մ ³	69,6	149,000	10,370,400
9	Հենապատի հետնամասի դրենաժի (ցամաքուրդի) իրականացում	զժմ	11	2,000	22,000
10	Դրենաժային խողովակների տեղադրում, Pvc խող. d=110 x 3.2 մմ	զժմ	12,6	2,500	31,500
11	Քսվածքային ջրամեկուսացում, 2 շերտ տաք բիտումով	մ ²	82,46	4,650	383,439
12	Հենապատի սեկցիաների միջև միջադիր, փրփրապլաստ հ=4սմ	մ ²	71,09	1,650	117,299
13	Հետադարձ լիցք բուլդոզերով 10Յ-V	մ ³	155	850	131,750
14	Հետադարձ լիցք ձեռքով 10Յ-V	մ ³	17,25	850	14,663
15	Նախօրոք մշակված 10Յ-V կարգի բնահողի բարձումը էքս. 1.0մ ³ շ.տ. ա/ի տեղափոխում լցակույտ միջինը 6.0կմ միջին հեռ. վրա	մ ³	76,87	2,700	207,549
Հենապար Կմ 8 + 314 - Կմ 8 + 379					
1	9Դ -V կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով հ-0.5-1.0մ	մ ³	140,69	6,000	844,140
2	Նախօրոք փխրեցված 9Դ-V կարգի բնահողի բարձում ա/ի 1.0մ ³ շ. տ. էքս., և տեղափոխում լցակույտ 6,0 կմ հեռ. վրա	մ ³	109,21	2,000	218,420
3	Նույնը ձեռքով	մ ³	12,16	1,000	12,160
4	Նախօրոք փխրեցված 9Դ-V կարգի բնահողի բարձումը էքս. 1.0մ ³ շ.տ. ա/ի տեղափոխում մինջև 1.0կմ, կուտակում հետադարձ լիցքի համար	մ ³	159,8	1,950	311,610
5	20ա -VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով հ-0.5-1.0մ	մ ³	46,5	6,000	279,000
6	Նախօրոք փխրեցված 20ա-VII կարգի բնահողի բարձում ա/ի 1.0մ ³ շ. տ. էքս., և տեղափոխում լցակույտ 6,0 կմ հեռ. վրա	մ ³	41,85	1,600	66,960
7	Նույնը ձեռքով	մ ³	4,65	1,000	4,650
8	20բ -VIII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով հ-0.5-1.0մ	մ ³	85,83	6,000	514,980
9	Նախօրոք փխրեցված 20բ-VIII կարգի բնահողի բարձում ա/ի 1.0մ ³ շ. տ. էքս., և տեղափոխում լցակույտ 6,0 կմ միջին հեռ. վրա	մ ³	77,25	1,600	123,600
10	Նույնը ձեռքով	մ ³	8,58	1,000	8,580
11	Հենապատի հիմքի իրականացում միաձույլ բետոնից	մ ³	165,95	149,000	24,726,550
12	Հենապատի իրանի իրականացում միաձույլ բետոնից	մ ³	232,08	149,000	34,579,920
13	Հենապատի հետնամասի դրենաժի (ցամաքուրդի) իրականացում	զժմ	65	2,000	130,000
14	Դրենաժային խողովակների տեղադրում, Pvc խող. d=110 x 3.2 մմ	զժմ	39,18	2,500	97,950
15	Քսվածքային ջրամեկուսացում, 2 շերտ տաք բիտումով	մ ²	166,64	4,650	774,876

16	Հենապատի սեկցիաների միջև միջադիր, փրփրապլաստ h=4սմ	մ ²	172,5	1,650	284,625
17	Խամքարե բետոնե եզրապատ, B20, F200	մ ³	16,48	149,000	2,455,520
18	Մետաղական ձող Փ-16մմ, l= 0.6մ , 1գծմ =1.579 կգ	կգ	76,74	380	29,161
19	Եզրապատի ներկում ջրակայուն ներկով	մ ²	120,28	1,600	192,448
20	Նախապես կուտակած 9ճ-V կարգի բնահողի բարձում էքս. 1.0 մ ³ շ. տ. ա/ի, տեղափոխում 1կմ միջին հեռ. հետադարձ լիցքի համար	մ ³	159,8	1,950	311,610
21	Հետադարձ լիցք բուլդոզերով 9ճ-V	մ ³	143,82	1,750	251,685
22	Հետադարձ լիցք ձեռքով 9ճ-V	մ ³	15,98	1,620	25,888
Հավաքովի ե/բ խողովակների d=630 մմ տեղադրում					
1	20ա-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=0.5մ	մ ³	34,0	6,000	204,000
2	Հողային աշխատանքներ նախօրոք փխրեցված 20ա-VII կարգի բնահողում հունի ուղղման համար էքս.1,0մ ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 6,0կմ. հեռ. վրա	մ ³	9,0	1,660	14,940
3	Հողային աշխատանքներ նախօրոք փխրեցված 20ա-VII կարգի բնահողում խողովակի փոսորակի փորման համար էքս. 1,0մ ³ շ. տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 6,0կմ հեռ. վրա	մ ³	25,0	1,150	28,750
4	Ճանապարհային հանույթից 10ե-IV կարգի բնահողի մշակում էքս. 1,25մ ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում հետադարձ լիցքի համար 2,0կմ	մ ³	16,0	1,950	31,200
5	Խճային հիմք h=20սմ	մ ³	2,08	4,500	9,360
Գլխամասերի կառուցում միաձույլ բետոնից B20, F100					
6	հիմքեր	մ ³	0,80	149,000	119,200
	իրաններ	մ ³	1,91	149,000	284,590
7	Մետաղական ժարտ= 630 մմ խողովակի տեղադրում 1գծմ=107,55կգ, պատի հաստ. 7մմ	գծմ	13,8	80,000	1,104,000
8	Որմնակապային ամրաններ Ø16A500c, l=45սմ	կգ	2,84	149.30	424
Քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով					
9	խողովակ	գծմ	13,0	6,000	78,000
	բետոն	մ ²	11,74	2,450	28,763
Հետադարձ լիցք					
10	բուլդոզերով (10ե VI)	մ ³	14,0	1,750	24,500
	ձեռքի աշխատանքով (10ե VI)	մ ³	2,0	1,400	2,800
Մետաղական ժարտ=1020մմ խողովակների տեղադրում					
1	13-V կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=0.5մ	մ ³	73	6,000	438,000
2	9ճ-V կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=0.5մ	մ ³	43,5	6,000	261,000
3	206 - VIII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=0.5մ	մ ³	13	6,000	78,000
4	20ա-VII կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h=0.5մ	մ ³	549	6,000	3,294,000
5	Հողային աշխատանքներ 10ե IV կարգի բնահողում հունի ուղղման համար էքս.1,0 մ ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 6,0կմ հեռ. վրա	մ ³	12	1,620	19,440
6	Հողային աշխատանքներ 33r - III կարգի բնահողում հունի ուղղման համար էքս.1,0 մ ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 6,0կմ հեռ. վրա	մ ³	72	800	57,600
7	Հողային աշխատանքներ 10ա V կարգի բնահողում հունի ուղղման համար էքս.1,0մ ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 6,0կմ հեռ. վրա	մ ³	156	1,000	156,000

8	Հողային աշխատանքներ նախօրոք փխրեցված 13-V կարգի բնահողում հունի ուղղման համար էքս.1,0մ3 2.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 6,0կմ հեռ. վրա	մ ³	53	1,000	53,000
9	Հողային աշխատանքներ նախօրոք փխրեցված 9d-V կարգի բնահողում հունի ուղղման համար էքս.1,0մ3 2.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 6,0կմ հեռ. վրա	մ ³	18	1,000	18,000
10	Հողային աշխատանքներ նախօրոք փխրեցված 206 - VIII կարգի բնահողում հունի ուղղման համար էքս.1,0մ3 2.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 6,0կմ հեռ. վրա	մ ³	9	1,660	14,940
11	Հողային աշխատանքներ նախօրոք փխրեցված 20a-VII կարգի բնահողում հունի ուղղման համար էքս.1,0մ3 2.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 6,0կմ հեռ. վրա	մ ³	149	1,660	247,340
12	Հող. աշխատանքներ 10e IV կարգի բնահողում փոսորակների փորման համար էքս.1,0 մ3 2.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 6,0կմ հեռ. վրա	մ ³	31	1,620	50,220
13	Հող. աշխատանքներ 33r - III կարգի բնահողում փոսորակների փորման համար էքս.1,0 մ3 2.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 6,0կմ հեռ. վրա	մ ³	290	850	246,500
